ISSN 2953-805X

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

7

NATIONAL ACADEMY OF SCIENCES, RA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

PROCEEDINGS OF THE INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

НАІА-7

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК, РА
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ТРУДЫ ИНСТИТУТА АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ХАИА-7

IAE PUBLICATION ▪ ИЗДАТЕЛЬСТВО ИАЭ
YEREVAN 2025 ЕРЕВАН

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱԻԱ-7

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

7

ՀԱԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՒԱՆ 2025

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Published by decision of the Scientific Council of the Institute of Archaeology and Ethnography, NAS of RA

Խմբագրական խորհուրդ

Գլխավոր խմբագիր՝ *Արսեն Բոբոխյան*

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ *Տորք Դալալյան*

Խմբագրակազմ՝ *Լևոն Աբրահամյան, Պավել Ավետիսյան, Աստղիկ Բաբաջանյան, Ռուբեն Բադալյան, Միհրան Գալստյան, Ջուստո Թրաինա, Թեո վան Լինթ, Լորի Խաչատրուրեան, Ռուբեն Կարապետյան, Թամար Հայրապետյան, Արսեն Հարությունյան, Սուրեն Հոբոսյան, Դիանա Միրիջանյան, Ադամ Սմիթ, Պատրիկ Տօնապետեան, Պիտեր Քաուի*

Editorial Board

Editor-in-Cief: *Arsen Bobokhyan*

Vice-Editor-in-Chief: *Tork Dalalyan*

Editorial Stuff: *Levon Abrahamian, Pavel Avetisyan, Astghik Babajanyan, Ruben Badalyan, Peter Cowe, Patrick Donabédian, Mihran Galstyan, Arsen Harutyunyan, Tamar Hayrapetyan, Suren Hobosyan, Ruben Karapetyan, Lori Khatchadourian, Theo van Lint, Diana Mirijanyan, Adam Smith, Giusto Traina*

ՀԱԻԱ պարբերականի հերթական՝ 7-րդ հատորն ընդգրկում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի, Երևանի պետական համալսարանի, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի, UCLA համալսարանի Ֆաուլերի թանգարանի (Լոս-Անջելես, Կալիֆորնիա) և Վիլնյուսի Եւրոպական հումանիտար համալսարանի (Լիտվա) հետազոտողների հոդվածներն ու հաղորդումները, որոնց նախնական տարբերակները որպես զեկուցում ներկայացվել են ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ 2023թ. դեկտեմբերի 12–13-ին ՀԱԻ Սփյուռքի ուսումնասիրության բաժնի և Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի համատեղ կազմակերպած «Էթնոսոցիալական փոփոխությունները հայկական Սփյուռքում» գիտաժողովին: Հատորը եզրափակվում է Սփյուռքում հրատարակվող երկու պարբերականների վերջին համարների ընդարձակ գրախոսություններով և լրատուով:

ISSN 2953-805X
DOI:10.54503/2953-805X

© ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ա. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ

I. ՀՀ–ՍՓՅՈՒՌՔ, ՀՀ–ԱՐՏԵՐԿԻՐ. ՓՈԽԿԱՊԵՐ ԵՎ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ռոբերտ Կարապետյան
Հայաստանի Հանրապետության հետ Սփյուռքի միգրացիոն կապերի մասին 8

Հրաչիկ Վարդանյան
Մարիամ Հակոբյան
Ինքնության քաղաքականությունը՝ որպես պետություն-սփյուռք
գործակցության բաղադրիչ (ՀՀ–Սփյուռք հարաբերությունների պարագան) 21

Հրայր Ճէպէճեան
Մերձաւոր Արևելքի հայ համայնքներ և ՀՀ յարաբերութիւններ.
արդի միտումներ, մարտահրաւէրներ և հնարաւորութիւններ 34

Գայանե Հակոբյան
Նոր միգրանտների սոցիալ-մշակութային կյանքը Սփյուռքում.
հայաստանցի հարազատների դիտանկյունը 48

Սոնա Ներսիսյան
Ռուսաստանցի և հնդկաստանցի ներգաղթյալների
ինտեգրման փորձառությունը Հայաստանում 59

II. ԱՐԵՒԵԼՅԱՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Ստեփան Զահարկնիչ
Արևելյան Եվրոպայի հայ համայնքների հիշողության մշակույթը
և դրա վրա պատմական քաղաքականության ու ազգային ծրագրերի
ազդեցությունը արդի փուլում 72

Սվետլանա Պողոսյան
Վառնայի հայ համայնքի սոցիալ-մշակութային առանձնահատկությունները.
իրավիճակ, միտումներ և զարգացումներ 89

Գոռ Մարտիրոսյան
Լեհաստանում հայ ներգաղթյալների տնտեսական գործունեության տեսակները,
այդ գործունեության դիվերսիֆիկացիայի և փոփոխության արդյունքները 103

Լուսինե Տանաջյան
Սյուզաննա Բարսեղյան
Հայերը Չեխիայում. համայնքային կյանքի յուրահատկություններ 113

III. ԱՄՆ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔ

Միհրան Գալստյան
«Հայրենադարձություն» եզրույթը Սփյուռքի արդի գործընթացների
համատեքստում. Լոս-Անջելեսի հայ համայնքի օրինակը 126

Վերժինե Սվազլյան
Ամերիկահայոց հայապահպանման մակարդակը՝ ըստ բանավոր մշակույթի գրառված նյութերի 139

IV. ՏԵՍԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Նելլի Խաչատրյան
Մարիամ Հարությունյան
Կրոնատածության փոխանցումն ընտանիքում. տեսական խնդիրներ 156

Ռուբեն Օհանջանյան
Սոցիալական հեռավորության չափման՝ Բոգարդուսի սանդղակի կիրառման յուրահատկությունները 167

Բ. ՁԱՆԱՁԱՆՔ

V. ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Կարեն Ասատրյան
Պոլսահայ կրթական համակարգի վկայագրեր և վիճակացույցներ (19-րդ դարավերջ – 20-րդ դարասկիզբ) 176

Սալվինե Մարկոսյան
«Հայաստան» շաբաթաթերթի դերը պոլսահայ մշակութային կյանքում 183

VI. ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

Կասիա Արմենյան
Լույսով մնաք. Հայրենիքի և Սփյուռքի տեսլականները 188

VII. ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

Տորք Դալալյան
Լուսինե Հայրիյան
Մնահիտ Խեչոյան
Études arméniennes contemporaines, 2023, №15.
Ֆրանսիայի հայալեզու մամուլը և անդրազգային տարածույթի ստեղծումը 200

Անդրանիկ Տագէսեան
Հայկազեան հայագիտական հանդէսի 43-րդ և 44-րդ հատորներուն չորս գիրքերը 204

VIII. ԼՐԱՏՈՒ

Միլզան Բոնապեան
Հայագիտական ամառնային խտացեալ դասընթացքին 40-րդ տարին. Վենետիկի մեջ՝ հայկական աշխարհ 218

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ 221

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 230

IV

ՏԵՍԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

DOI: 10.54503/2953-805X-2025.7-156

Նելլի Խաչատրյան, *պ.գ.թ.*
Մարիամ Հարությունյան
ՀԱԻ

ԿՐՈՆԱՏԱԾՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ. ՏԵՍԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Համաշխարհայնացման միտումներով պայմանավորված՝ ներկայում հանրության մեջ նկատելի է դարձել կրոնական գործոնի «վերածնունդը»: Այս առումով, մի կողմից՝ ձևավորվում են որոշ իրարամերժ գործընթացներ, ինչպես՝ ավանդական և ոչ-ավանդական կրոնական ուղղություններին հարողների աճող միտումները, իսկ մյուս կողմից՝ շրջադարձ դեպի «հավատք առանց պատկանելության» կրոնագիտական և հասարակագիտական ֆենոմենը: 20–21-րդ դդ. հանրության մեջ կրոնական կյանքի դինամիկ փոփոխություններից ելնելով՝ որոշ հետազոտողներ սկսել են անդրադառնալ առաջնային սոցիալականացման խմբերում կրոնատածության հարցերին:

Հոդվածը ներկայացնում է ընտանիքում կրոնատածության փոխանցման վերաբերյալ տեսական և էմպիրիկ ուսումնասիրությունների վերլուծություն՝ հիմնված արտերկրի հետազոտողների տեսական և դաշտային արդյունքների վրա[1]: Հոդվածն ունի հետախուզական բնույթ: Հատկանշական են ոչ այնքան կրոնական ներգրավվածության քանակական ցուցանիշները, որքան կրոնատածության վերարտադրման սոցիալական ինստիտուտները: Հաշվի են առնվում նաև ընտանիքի կրոնատածության վրա ազդող արտաքին գործոնները՝ մշակութային միջավայրը, տվյալ հանրության մեջ կրոնի տեղն ու դերը:

Հիմնաբառեր՝ կրոն, կրոնատածություն, ընտանիք, միջսերնդային փոխազդեցություն, կրոնական սոցիալականացում, հաղորդակցություն:

Ներածություն

Սոցիալական փոքր խմբերում կրոնական ինքնության վերարտադրումը քիչ ուսումնասիրված ոլորտ է: Հանրության մեջ կրոնի և ընտանիքի միջև կապի հարցը, պայմանավորված կրոնական գործոնի փոփոխություններով, հատուկ նշանակություն է ստանում արդի հանրության մեջ: Տարբեր սերունդների ներկայացուցիչներին բնորոշ է յուրահատուկ կրոնական սոցիալականացումը, որ կախված է կրոնի հանդեպ անհատական վերաբերմունքից կամ կրոնատածության վերարտադրման *մեխանիզմ*ներից:

Հատուկ ուշադրություն է դարձվում տարբեր սերունդների կրոնատածության վրա ազդող գործոնների նկարագրությանը, կրոնատած և ոչ-կրոնատած ընտանիքներում կրոնատածության փոխանցման ձևերին, այդ պայմաններում ծնողների և երեխաների փոխհարաբերություններին, երեխաների սո-

[1] Այս ուղղությամբ առկա գիտական գրականության տեսությունը տե՛ս Дивисенко и др. 2018, 76.

ցիալական բարեկեցությանն ու դաստիարակությանը: Ուշադրություն է դարձվում նաև ընտանիքի կրոնատածության վրա ազդող արտաքին գործոններին:

Արդի աշխարհում նկատվող կրոնական «զարթոնքը», ըստ որոշ հետազոտողների, հանրության աշխարհիկացման հետևանքներից մեկն է[2]: Այս գործընթացը զուգորդվում է մի կողմից՝ մարդկանց զանգվածային «դարձով» դեպի ավանդական կրոնները կամ ոչ-ավանդական կրոնական ուղղություններին հարելով, մյուս կողմից՝ շրջադարձով դեպի կրոնագիտական և սոցիալական մի *ֆենոմեն*, որ բնորոշվում է որպես «հավատք առանց պատկանելության»[3]: Վերջինս պայմանավորված է ավանդական «էթնիկ կրոնի» հետ տվյալ «էթնիկ խմբի» ներկայացուցիչների մշակութային նույնականացմամբ, որը չի ենթադրում կրոնական *դոգմատիկայ*ի և *ինստիտուցիոնալ պրակտիկայ*ի խորը ընկալում: Սա, իր հերթին, հանգեցնում է «արտադավանական կրոնատածության», երբ մարդիկ *դոգմատիկ*որեն ու բարոյապես համաձայն են որոշակի դավանանքի, առաջնորդվում են համապատասխան սկզբունքներով, սակայն զանազան պատճառներով մնում են առանց եկեղեցուն պաշտոնական պատկանելության:

Հոդվածի մեթոդաբանությունը հիմնված է տվյալ թեմայի վերաբերյալ երկրորդային տվյալների ուսումնասիրության և վերլուծության վրա: Առաջնահերթ և արդիական ենք համարում այս հարցին առնչվող տեսական և *էմպիրիկ* մոտեցումները՝ հետագայում հայության և հայկական Սփյուռքի վերաբերյալ դրանց կիրառման նպատակով:

1990-ականների սկզբին, հատկապես նոր ձևավորվող Սփյուռքում, այս խնդիրը չէր կարող պատշաճ ուսումնասիրվել՝ օբյեկտիվ պատճառներից ելնելով, քանի որ կրոնատածների մեծ մասը կամ *նեոֆիտ* էին (կրոնատածների առաջին սերնդի ներկայացուցիչ), կամ կրոնի հանդեպ տատանվողներ և ոչ-կրոնատածներ՝ հակակրոնական խորհրդային քաղաքականության հետևանքով: Սակայն այդ տարիներին կրոնատածության վերաբերյալ արված եզակի հետազոտությունները ցույց են տալիս հարցվածների մեջ կրոնական արարողություններին հաճախողների թվի աճ[4], որն, ըստ երևույթին, շարունակվում է առ այսօր: Եւ եթե ենթադրենք, որ մոտ ապագայում կրոնատածների տեսակարար կշիռն առնվազն նույնը կմնա, շատ հավանական է, որ աստիճանաբար կփոխվեն կրոնատածության վերարտադրման որակը, կրոնական սոցիալականացման *մեխանիզմ*ները և դրանց բնույթը: Հետևաբար՝ անհրաժեշտ ենք համարում անհատական կրոնատածության հիմնախնդիրների ուսումնասիրությունից շեշտը տեղափոխել դեպի փոքր խմբերը, մասնավորապես՝ ընտանիքում կրոնատածության վերարտադրման ուսումնասիրության վրա:

Կրոնատածություն և դաստիարակություն

Կրոնատած և ոչ-կրոնատած ընտանիքների համեմատական հետազոտության մեջ, օրինակ՝ Ի.Ա. Կուզնեցովայի ուսումնասիրությունը թույլ է տալիս

---

2 Синелина 2009, 15–17; Добреньков 2012, 5–14.

3 Davie 2006, 274.

4 Карапетян, Хачатурян 2021, 138–141.

եզրակացնել, որ ուղղափառ դավանանքի ծնողների հոգևոր և բարոյական արժեքներն ազդում են երեխաների դաստիարակության վրա: Մասնավորապես, այդ ծնողներն առավել պահանջկոտ են իրենց և իրենց երեխաների հանդեպ, առաջնորդվում են դաստիարակության հեղինակավոր (авторитетный) ոճով: Կրոնատած ընտանիքներում ծնողներն ավելի մեծ հեղինակություն են երեխաների համար, քան ոչ-կրոնատած ընտանիքներում: Կրոնատած ծնողների երեխաներն ընտանիքում առավել մեծ հոգեբանական հարմարավետություն են զգում. նկատվում է տագնապային *ֆոնի*, *կոնֆլիկտ*ների և *ագրեսիվ*ության առավել ցածր մակարդակ[5]:

Դ.Մ. Չումակովան վերլուծում է ծնողների կրոնատածության և ներընտանեկան սոցիալական փոխազդեցության կապը: Պարզվում է, որ կրոնատածությունը ծնողներին թույլ է տալիս ավելի լավ հաղթահարել *սթրես*ները՝ կրոնական հաղթահարման ռազմավարությունների օգտագործման շնորհիվ, որով բարձրանում է ընտանիքի անդամների *սուբյեկտիվ* բարեկեցության մակարդակը և ընտանեկան կյանքից ընդհանուր գոհունակությունը[6]:

Կրոնը կապված է ավանդույթի հետ, և որպես արդյունք՝ կրոնատած ընտանիքներում ամուսինների և երեխաների միջև փոխհարաբերությունները կարող են հիմնված լինել նահապետական կամ հայրիշխանական համակարգի վրա: Ավանդական հայացքներն ու կրոնատածության բարձր աստիճանը բացասաբար չեն անդրադառնում երեխաների դաստիարակության վրա: Այսպիսի եզրակացության է հանգում Ու. Ուիլքոքսը՝ հիմնվելով ԱՄՆ-ում երեք պահպանողական կրոնական խմբերի՝ բողոքականների, կաթոլիկների և ուղղափառ հրեաների մեջ կատարած համեմատական հետազոտության վրա, որն անցկացվել է 1987–1988 և 1998–1999 թթ.[7]:

Հետազոտողը եզրակացնում է, որ հավատքը և կրոնը մարդկանց դրդում են առավել ժամանակ և ջանք հատկացնելու իրենց երեխաների կրոնական դաստիարակությանը: Ավելին, շատ կրոնների էթիկական ուսմունքները զգալի շեշտադրում են կատարում ծնողական պարտականությունները պատշաճ կերպով կատարելու վրա: Կրոնատածներին բնորոշ են առավել սերտ սոցիալական հարաբերությունները ինչպես ընտանիքի ներսում, այնպես էլ համայնքում, ինչն իրենց երեխաներին ապահովում է սոցիալական աջակցության ավելի բարձր մակարդակով և նպաստում նրանց հաջող սոցիալականացմանը[8]:

Պարզվում է, որ կրոնական առումով պահպանողական ծնողները, որոնք շաբաթական առնվազն մեկ անգամ հաճախում են եկեղեցի, ավելի շատ են խրախուսում իրենց երեխաներին, հուզական աջակցություն ցուցաբերում նրանց և առավել ներգրավված են նրանց կյանքում: Սա խոսում է կրոնական հայացքների, պահպանողականության, եկեղեցի կանոնավոր հաճախելու և ընտանիքում երեխաների դաստիարակության միջև կապի մասին: Նման ծնող-

5 Кузнецова 2007, 23.
6 Чумакова 2014, 139–140.
7 Wilcox 2007, 227–230.
8 Wilcox 2007, 230–239.

ները նաև ավելի հաճախ են խրատում իրենց երեխաներին, սակայն խուսափում են կոպիտ վարվել դպրոցահասակ երեխաների հետ և առավել հակված են խրախուսելու ու գովաբանելու նրանց, քան ոչ-պահպանողական կրոնական խմբերի անդամները:

Կրոնապես *ակտիվ* և ավանդապահ ծնողները կարգապահությունն ու խրախուսումը համատեղում են խստության, բայց ոչ կոպտության հետ: Կրոնատած ընտանիքների հայրերն ավելի շատ են ներգրավված դպրոցահասակ երեխաների հետ անհատական հաղորդակցության, դասապատրաստման, կամավորության, սպորտային նախասիրությունների և այլ ոլորտներում[9]:

Կրոնատածություն և երեխայի սոցիալականացում

Երեխաների ընտանեկան դաստիարակության մեջ, բացի արժեհամակարգի փոխանցումից, կրոնական սոցիալականացման հիմնական բաղադրիչներից է դառնում եկեղեցական ծեսերին համատեղ հաճախելը: Սա համարվում է ոչ միայն անհատական կրոնատածության ցուցիչ, այլև երեխաների դաստիարակության գործոն՝ համախոհների խմբի հետ անմիջական փոխազդեցության և *կոնկրետ* սոցիալական շրջանակի գիտակցված ձևավորման միջոցով:

Ծնողների՝ երեխաների հետ եկեղեցական արարողություններ հաճախելը կամ եկեղեցու հովանու ներքո տարբեր ծառայությունների մասնակցելը ոչ միայն ավելացնում է ծնող – երեխա միասին անցկացրած ժամանակը, այլև ապահովում է դաստիարակության և վերահսկողության լրացուցիչ հնարավորություններ: Կրոնատածության առավել բարձր աստիճան ունեցող ծնողներն ազդեցություն են թողնում դեռահասների կողմից սոցիալական շրջապատի ընտրության վրա, և նրանց համար անընդունելի են վարքի որոշ ձևեր, ինչպես, օրինակ՝ ալկոհոլի օգտագործումը նն:

Կաթոլիկ ծնողները՝ հատկապես բարձրագույն կրթություն ունեցողներն, ավելի շատ են ծանոթ իրենց երեխաների սոցիալական շրջապատին՝ նրանց ընկերներին, դպրոցի ուսուցիչներին, ընկերների ծնողներին, քան ոչ-կրոնատածները: Նրանց երեխաներն ավելի ակտիվ են հաճախում կիրակնօրյա դպրոցներ[10]: Երեխաների դրական կրոնական սոցիալականացման վրա ազդեցություն է թողնում ծնողներից առնվազն մեկի անձնական օրինակը[11]:

Կրոնատածություն և կրոնական պրակտիկաների փոխանցում

Հաջորդիվ, ամերիկյան դեռահասների առողջության ազգային *լոնգիթյուդ* հետազոտության նյութերն, իրենց հերթին, ցույց են տալիս, որ ծնողների կրոնատածության բարձր աստիճանն ազդում է երեխաներին կրոնական համոզմունքների և պրակտիկաների փոխանցման հաջողության վրա[12]:

---

9 Дивисенко и др. 2018, 79.

10 Kim, Elder 2014, 560–569.

11 Lichter, Carmalt 2009, 170–180.

12 Gold et al. 2015, 50–61.

1995 թ. Ամերիկյան կաթոլիկների ազգային հետազոտությունը գնահատել է կրոնատածության ընդհանուր մակարդակը (արարողություններին մասնակցելու հաճախականությունը, Հաղորդություն ընդունելը և Աստվածաշունչ կարդալը) և ծնողներից յուրաքանչյուրի հետ մտերմության աստիճանն ու ինքնագնահատականը: Պարզվել է, որ ժառանգների կրոնատածության մակարդակի վրա մեծապես ազդում է հոր կրոնատածությունը՝ անկախ նրա հետ հարաբերությունների մտերմության աստիճանից, մոր հետ սերտ հարաբերություններից ու մոր կրոնատածության աստիճանից[13]:

Այովա նահանգի գյուղական վայրերում բնակվող ընտանիքների մեջ հետազոտությունները նպատակ էին հետապնդում բացահայտելու դեռահասների կողմից ծնողների կրոնական գիտելիքների և պրակտիկայի ընկալման *մեխանիզմ*ները[14]: Հարցվողների երեք քառորդը բողոքական էին (հիմնականում *լյութերական* և *մեթոդիստ*): Բոլոր ընտանիքներն ունեցել են 12–13 տարեկան երեխաներ: Հետազոտողների նախնական վարկածներից մեկն այն էր, որ ընտանիքում կրոնատածության փոխանցումն արդյունավետորեն իրականացվում է դեռահասի կողմից ծնողների ընդունման բարձր աստիճանի դեպքում: Արդյունքները հաստատեցին, որ երեխայի կողմից ծնողների ընկալումը կարևոր միջնորդ օղակ է կրոնական համոզմունքների և պրակտիկայի փոխանցման գործում: Որքան բարձր է ծնողի ընկալում-ընդունումը, այնքան ավելի նշանակալի է ծնողների դերը երեխաների կրոնատածության փոխանցման մեջ: Ինչպես տղաների, այնպես էլ աղջիկների կողմից եկեղեցի այցելելու հաճախականությունն ուղղակիորեն կապված էր նրանց կրոնական ընկալումների և Աստծո գաղափարի կարևորության հետ: Նույն օրինաչափությունը բացահայտվում էր նաև նրանց ծնողների մեջ[15]:

Ընտանիքում կրոնատածության փոխանցման ուսումնասիրությունների ընթացքում կարևորություն է ստանում ոչ միայն ծնողների, այլև տատիկների և պապիկների ազդեցության վերլուծությունը թոռների կրոնական դաստիարակության վրա: Օրինակ՝ Հարավային Կալիֆորնիայի համալսարանի իրականացրած կրոնատածության միջսերնդային փոխանցման *լոնգիթյուդ* հետազոտությունը (1971–2010 թթ.) ցույց է տվել ավագ սերունդների դերի կարևորությունը երիտասարդների կրոնական կյանքում: Հետազոտողները դիտարկել են կրոնական դաստիարակության շարունակականությունն ու փոփոխությունները ընտանիքներում՝ մի սերնդից մյուսին կրոնական արժեքների և *պրակտիկա*ի փոխանցման համատեքստում[16]: Վերլուծվել է կրոնատածության փոխանցումը երեք *ասպեկտ*ների՝ 1) կրոնական արարողություններին մասնակցելու հաճախականության, 2) սեփական կրոնատածության ընկալման և 3) ավանդական կրոնական համոզմունքների հետ համաձայնության աստիճանի տեսանկյունից:

13 Baker-Sperry 2001, 185–193.

14 Bao et al. 1999, 362–374.

15 Елисеева 2016, 218–219.

16 Bengtson et al. 2009, 331–340.

Կրոնատածությունը երեք սերունդների փոխհարաբերություններում

Արդյունքները ցույց են տվել, որ *լոնգիթյուդ* հետազոտության ժամանակահատվածում (1971–2000 թթ.) կրոնական ոլորտում որոշակի փոփոխություններ են տեղի ունեցել բոլոր երեք սերունդների ներկայացուցիչների մեջ: Աճել է հարցվողների քանակը, ովքեր իրենց չէին դասում որևէ դավանանքի, սակայն, միևնույն ժամանակ, նրանց մեջ նկատվում էր կրոնական արարողություններին մասնակցելու հաճախականության աճ, նվազել էր սեփական կրոնատածության կարևորության գնահատման և նախնիների (տատիկների ու պապիկների) ավանդական կրոնական համոզմունքների հետ համաձայնության աստիճանը: Եթե 1971-ին ավանդական կրոնական համոզմունքների փոխանցման աճ էր գրանցվել նախնիներից թոռներին, ապա արդեն 2000-ին այս փոխանցման աստիճանը նվազել էր: Հատկանշական է նաև, որ, անկախ ուսումնասիրության ժամանակահատվածից, պապիկների ազդեցությունը թոռների կրոնատածության վրա բավական չնչին էր[17]:

Մեկ այլ հետազոտության նպատակն էր՝ բացահայտել, թե արդյո՞ք Այովա նահանգում ավագ սերնդի բարձր աստիճանի կրոնատածություն ունեցող ներկայացուցիչներն ավելի շատ են ներգրավված թոռների հետ շփման գործընթացում, քան ոչ-կրոնատածները: Հետազոտողները վերլուծում էին այն հնարավոր գործոն-«միջնորդները», որոնք կարող էին ազդեցություն թողնել կրոնատածության և ընտանեկան հարաբերությունների *ինտենսիվ*ության միջև կապի վրա: Արդյունքները ցույց տվեցին, որ կրոնատած մարդիկ հակված են ներընտանեկան հարաբերություններում ավելի ավանդական կամ պահպանողական շփմանը, ինչպես նաև՝ *գենդեր*ային դերերի ոլորտում: Նրանք ունակ են ունենալու ավելի ուժեղ ընտանեկան և սոցիալական կապեր ինչպես ընտանիքի ներսում, այնպես էլ ընտանիքից դուրս: Այսպիսով, կրոնատածության բարձր աստիճան ունեցող նախնիներն ավելի շատ էին ներգրավված իրենց թոռների կյանքում, ունեին դաստիարակչական ազդեցություն, նրանց բնորոշ էր թոռների հետ ավելի սերտ անձնական կապը, այդ թվում՝ ավելի մեծ ներողամտության հաշվին[18]:

«Կրոնական կապիտալ»-ի հայեցակարգը

Կրոնատածության միջսերնդային փոխանցման վերլուծությունն անհրաժեշտ է իրականացնել կրոնի *սոցիոլոգիա*յում նոր հարացույցի տեսական և մեթոդաբանական *ապարատ*ի կիրառմամբ: Այս ոլորտի առանցքային դեմքերից է՝ ամերիկացի սոցիոլոգ Լոուրենս Յանակկոնեն, ով առաջարկել է «կրոնական կապիտալի» հայեցակարգը: Այն թույլ է տալիս ստեղծել մի *մոդել*, որը բացատրում է կրոնական վարքի որոշակի օրինաչափություններ, որոնք վերաբերում են միջդավանանքային և միջկրոնական շարժունությունը, կրոնատածության սոցիալական, երբեմն նաև սոցիալ-տնտեսական ներդրմանը և ընտանիքում կրոնատածության վերարտադրման *մեխանիզմ*ներին[19]: «Կրոնական կապի-

[17] Bengtson et al. 2009, 333.

[18] King, Elder 1999, 317–323.

[19] Iannaccone 1990, 300–310.

տալ»-ն ուղղակիորեն վերաբերում է որոշակի կրոնի ներկայացուցիչներին բնորոշ գիտելիքներին, հմտություններին և փորձին, ինչպես և սոցիալական *կապիտալ*ին, որը տվյալ անհատը ձեռք է բերել որպես կրոնական համայնքի անդամ և դրանով իսկ կարող է նպաստել հանրության զարգացմանը: Ըստ Յանակկոնեի՝ հասարակագիտական տեսանկյունից «կրոնական կապիտալ»-ը միաժամանակ և՛ նախապայման է, և՛ կրոնական *պրակտիկա*յի հետևանք:

Տվյալ *պարադիգմ*ը հատկապես առանձնացնում է ընտանիքի կրոնական կապիտալը, որը հիմնականում կապված է ընտանիքում կրոնական սոցիալականացման աստիճանի հետ: Ըստ Յանակկոնեի՝ ընտանեկան միջավայրում կրոնական կապիտալի ձևավորումն առավել արդյունավետ է հանրության մեջ կրոնական կապիտալի ձևավորման տեսանկյունից: Ընտանեկան պայմաններում նվազագույնի են հասցվում կրոնական կապիտալի ձևավորման սոցիալական ծախսերը, մասնավորապես՝ ավելի արդյունավետ են այն պայմանները, երբ ամուսինները պատկանում են նույն կրոնին կամ դավանանքին: Ամուսինների կրոնական կապիտալը, կրոնատածությանը զուգահեռ, փոխանցվում է նրանց երեխաներին ինչպես անձնական օրինակով, այնպես էլ, կրոնական *պրակտիկա*ին և ուսմունքին ծանոթացնելու միջոցով: Մանկության տարիներից կուտակված կրոնական կապիտալը հետագայում որոշիչ է դառնում երեխաների անհատական կրոնատածության ձևավորման հարցում[20]:

Օրինակ՝ Իսպանիայում անցկացված ներկայացուցչական հարցման տվյալների հիման վրա վերլուծվել են ծնողներից երեխաներին «կրոնական կապիտալի» փոխանցման *մեխանիզմ*ները[21]: Հիմնական ենթադրությունն այն էր, որ ծնողների կրոնական վարքը հետագա սերունդների համար դերային մոդել է, որն էլ, իր հերթին, երեխաների մեջ ձևավորում է «կրոնական կապիտալ», այսինքն՝ համապատասխան վարք, արժեհամակարգ, գիտակցություն, որ հետագայում ներդրվելու է հանրության տարբեր ոլորտներում: Հետազոտությունը հաստատում է կրոնական կապիտալի փոխանցման միջսերնդային բնույթը: Հայտնաբերվել են նաև սեռային յուրահատկությունները. կրոնատածությունը փոխանցվում է մորից դստերը և հորից որդուն[22]:

Ծնողներից կրոնական կապիտալի փոխանցումը երեխաներին գործնականորեն հաստատվում է ոչ միայն քրիստոնյա, այլև մուսուլման ընտանիքներում: Այսպես, Պակիստանում անցկացված հետազոտության ընթացքում երեխաների և ծնողների կրոնատածությունը չափվել է յոթ փոփոխականներով, որոնք բնութագրում էին իսլամական բարեպաշտության վարքային կողմը: Կիրառելով *ռեգրեսիոն* հավասարումներ՝ ցույց է տրվել, որ երեխաների գործնական կրոնականության մեջ ամենամեծ ներդրումն ունի նրանց ծնողների կրոնական վարքը[23]:

20 Iannaccone 1990, 299.

21 Brañas-Garza et al. 2011, 655–664.

22 Brañas-Garza et al. 2011, 649–650.

23 Khawaja et al. 2016, 189–204.

Անհրաժեշտ է նաև նշել, որ կրոնական սոցիալականացման խնդիրը սերտորեն կապված է սոցիալական և հոգեբանական որոշ գործոնների հետ: Բացի ծնողներից, երեխաների կրոնական դաստիարակության վրա կարող են ազդել ոչ միայն ավագ սերունդները, այլև հարազատները, ինչպես նաև ընտանիքի հեղինակավոր անդամները: Ընդ որում, կրոնական սոցիալականացումը հնարավոր է միայն որոշակի տարիքից:

Իսկ ավելի ուշ տարիքից ծնողների դաստիարակության հետ կարող են մրցակցել ուսուցիչները, դասախոսները և հասակակիցները: Հաճախ նրանց թողած ազդեցությունը ոչ միայն փոխհամաձայնեցված չէ ծնողական դաստիարակության բովանդակային մասի հետ, այլև կարող է հակասել դրան: Ընտանիքի, դպրոցի և հասակակիցների համեմատական ազդեցությունը առավել խորը ուսումնասիրելու համար պահանջվում են հավելյալ հետազոտություններ և քննարկումներ: Այնուամենայնիվ, *էմպիրիկ* ուսումնասիրությունների արդյունքները վկայում են, առաջին հերթին, կրոնատածության ուղղահայաց փոխանցման (սերնդից սերունդ) վերաբերյալ, այլ ոչ թե հորիզոնական (հասակակիցներ և դպրոց): Կրոնատածության հորիզոնական փոխանցումն ավելի թույլ է և ավելի չնչին ազդեցություն ունի: Այն կախված է նաև տարբեր գործոններից, օրինակ՝ տարիքից և դավանանքից[24]:

Եզրահանգումներ

Ուսումնասիրությունները հաստատում են կրոնատածության և կրոնական կապիտալի փոխանցման գործընթացում ընտանիքի առանցքային դերը: Տեսական և դաշտային հետազոտությունները վկայում են կրոնատածության ուղղահայաց փոխանցման առաջնայնության մասին:

Կրոնական իմաստով շփվելով՝ երեխան ոչ միայն որդեգրում է իր ծնողների, տատիկների ու պապիկների, շրջապատի որոշակի կրոնական և գաղափարական դիրքորոշումները, այլև մտնում մի հանրություն, որի նորմերն ու արժեքները համապատասխանում են որոշակի կրոնական ավանդույթի, որն էլ կարող է ձևավորել *կոնկրետ* սոցիալական հարաբերություններ և *մեխանիզմներ*:

Կարևոր է նշել նաև, որ ընտանիքներում կրոնական սոցիալականացումը կարող է տեղի ունենալ ինչպես *եր-ֆիգուրատիվ* (ծնողներից երեխաներ), այնպես էլ *պրե-ֆիգուրատիվ* (չափահաս կրոնատած երեխաներից դեպի իրենց ծնողները) ձևաչափերով, քանի որ կրոնականացման գործընթացը պայմանավորված է հոգևորի սեփական որոնմամբ և ընկալմամբ ևս:

Կրոնական սոցիալականացման կարևոր բաղադրիչներից են սեփական կրոնի և դավանանքի, մշակույթի և ավանդույթների մասին գիտելիքների ձեռքբերումը, որը կարող է համալրվել այլ կրոնական համակարգերի և դրանց հետևորդների մասին որոշակի գաղափարների ձևավորմամբ: Այդպիսով, ընտանիքում կրոնատածության փոխանցումն ուսումնասիրելիս՝ անհրաժեշտ է

[24] Дивисенко и др. 2018, 86–87:

հաշվի առնել ոչ միայն ներքին (ընտանեկան), այլև արտաքին գործոնները՝ կապված տվյալ հանրության պատմական և մշակութային համատեքստի, դրանում կրոնի տեղի և դերի հետ:

Տվյալ հանրության փոքր խմբերի շրջանակում կրոնականության և կրոնական կապիտալի փոխանցման ամբողջական պատկերը կազմելու համար օգտակար կլինեն ոչ միայն կրոնական սոցիալականացման գործոնների, այլև միջմշակութային հոգևոր և կրոնական փոխանակումների վերաբերյալ ուսումնասիրությունները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ДИВИСЕНКО и др. 2018
Дивисенко К.С., Белов А.Э., Дивисенко О.В., Трансляция религиозности в семье от родителей к детям: аналитический обзор исследований // Социологический журнал, 2018, том 24, № 4, 75–92.

ДОБРЕНЬКОВ 2012
Добреньков В.И., Христианская и православная социология // Вестник Московского гос. ун-та, Политология и социология, 2012, серия 18, № 2, 3–24.

ЕЛИСЕЕВА 2016
Елисеева И.И., Эволюция структуры российских домохозяйств: попытка объяснения // Петербургская социология сегодня, 2016, № 7, 216–242.

КАРАПЕТЯН, ХАЧАТУРЯН 2021
Карапетян Р.С., Хачатурян Н.Р., Динамика религиозного поведения и сознания населения городов Армении (опыт сравнительного этносоциологического исследования 1980–2005 гг.) // Религиоведение, 2021, № 4, 136–143.

КУЗНЕЦОВА 2007
Кузнецова И.А., Духовно-нравственные ценности православия как фактор семейного воспитания детей, автореф. дис. канд. псих. наук, СПб., Ленинградский государственный университет имени А. С. Пушкина, 2007, 226 с.

СИНЕЛИНА 2009
Синелина Ю.Ю., Циклический характер процесса секуляризации в России (Социологический анализ: конец XVII – начало XXI века), автореф. дис. д-ра соц. наук., Москва, Институт социально-политических исследований РАН, 2009, 323 с.

ЧУМАКОВА 2014
Чумакова Д.М., Взаимосвязь религиозности личности и социального взаимодействия в семье: дис. канд. псих. наук., Курган, Курганский государственный университет, 2014, 165 с.

BAKER-SPERRY 2001
Baker-Sperry L., Passing on the Faith: The Father's Role in Religious Transmission // Sociological Focus, 2001, Vol. 34/2, 185–198.

BAO et al. 1999
Bao W.N., Whitbeck L.B., Hoyt D.R., Conger R.D., Parental Acceptance as a Moderator of Religious Transmission among Adolescent Boys and Girls // Journal of Marriage and Family, 1999, Vol. 61/2, 362–374.

BENGTSON et al. 2009
Bengtson V.L., Copen C.E., Putney N.M., Silverstein M.A., Longitudinal Study of the Intergenerational Transmission of Religion // International Sociology, 2009, Vol. 24/3, 325–345.

BRAÑAS-GARZA et al. 2011
Brañas-Garza P., García-Muñoz T., Neuman S., Intergenerational Transmission of "Religious Capital". Evidence from Spain // Revista Internacional de Sociología, 2011, Vol. 69/3, 649–677.

DAVIE 2006
Davie G., Religion in Europe in the 21st Century: The Factors to Take into Account // European Journal of Sociology, 2006, Vol. 47/2, 271–296.

GOLD et al. 2015
Gold N., Pulford B.D., Colman A.M., Do as I Say, Don't Do as I Do: Differences in moral judgments do not translate into differences in decisions in real-life trolley problems // Journal of Economic Psychology, 2015, Vol. 47, 50–61.

IANNACCONE 1990
Iannaccone L.R., Religious Practice: A Human Capital Approach // Journal for the Scientific Study of Religion, 1990, Vol. 29/3, 297–314.

KHAWAJA et al. 2016
Khawaja M.F., Farooqi F., Azid T., Intergenerational Transmission of Religious Capital in a Developing Country: A Case Study of District Multan (Pakistan) // Humanomics for polotical Economy and Philosophy, 2016, Vol. 32/2, 189–204.

KIM, ELDER 2014
Kim Y., Wilcox W.B., Religious Identity, Religious Attendance, and Parental Control // Review of Religious Research, 2014, Vol. 56/4, 555–580.

KING, ELDER 1999
King V., Elder G.H., Are Religious Grandparents More Involved Grandparents? // Journal of Gerontology: Social Sciences, 1999, Vol. 54/6, 317–328.

LICHTER, CARMALT 2009
Lichter D.T, Carmalt J., Religion and Marital Quality among Low-Income Couples // Social Science Research, 2009, Vol. 38, 168–187.

WILCOX 2007
Wilcox W.B., Focused on Their Families: Religion, Parenting and Child Well-Being // Authoritative Communities: The Scientific Case for Nurturing the Whole Child (ed. K.K. Kline), New York, Springer, 2007, 227–244.

Nelli R. Khachaturian, *Ph.D.*
Mariam B. Harutyunyan
Institute of Archaeology and Ethnography, NAS of RA

RELIGIOUS TRANSMISSION IN THE FAMILY: THEORETICAL APPROACH

Keywords: religion, religiosity, family, intergenerational transmission, religious socialization, communication.

Nowadays, the influence of the religious factor on various spheres of social life is increasing. The issues about religion, religiosity and the family gain particular relevance especially in the conditions of modern society. The family becomes one of the main factors of children's religious socialization. The first generation of believers is replaced by the next ones. Generations, in its turn, differ in the nature of religious socialization and the mechanisms of religious transmission.

The article presents a comparative analysis of the transmission of religiosity in the frame of family based on modern theoretical approaches and data from various field researches. The analysis is exploratory. The attention of the study is paid to the description of religiosity and the factors affecting on its transmission. The comparative analysis also takes into account the influence of parents' spiritual and moral values on the characteristics of childrens' upbringing. That are of particular importance not so much the quantitative indicators of religiosity, but the social institutions of religious transmission. External factors are also considered, such as the cultural environment, the place and role of religion in the society.

Нелли Рафиковна Хачатурян, *к.и.н.*
Мариам Багратовна Арутюнян
Институт археологии и этнографии, НАН РА

ТРАНСМИССИЯ РЕЛИГИОЗНОСТИ В СЕМЬЕ: ТЕОРЕТИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ

Ключевые слова: религия, религиозность, семья, межпоколенная трансмиссия, религиозная социализация, общение.

В наши дни усиливается влияние религиозного фактора на различные сферы общественной жизни. Вопросы о связи религии, религиозности и института семьи становятся особенно актуальными в условиях современного социума. Семья становится одним из главных факторов религиозной социализации детей. На смену первому поколению верующих приходят следующие. Поколения, в свою очередь, различаются характером религиозной социализации и механизмами воспроизводства религиозности.

В данной статье представлен сравнительный анализ изучения трансмиссии религиозности в семье, основанный на современных теоретических подходах и данных зарубежных полевых исследований. Анализ-исследование носит разведывательный характер. В представленном материале основное внимание уделяется описанию феномена религиозности и факторам, влияющим на его переход из поколения в поколение в пределах семьи. Сравнительный анализ учитывает влияние духовно-нравственных ценностей родителей на особенности семейного воспитания. Особое значение придается не столько количественным показателям, сколько социальным институтам воспроизводства религиозности. Учитываются также внешние факторы, влияющие на религиозность семьи: культурная среда, место и роль религии в данном обществе.

Ներկայացվել է՝ 09.02.2025,
գրախոսվել է՝ 08.04.2025,
ընդունվել է՝ 10.07.2025:

ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

Ասատրյան Կարեն Սաշայի
Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի կրտսեր գիտաշխատող
sardarapat01.22@gmail.com

Արմենյան Գասսիա
Կալիֆորնիայի համալսարանի (UCLA) Ֆաուլերի թանգարանի համադրողական և հետազոտական օգնական, Լոս-Անջելես, ԱՄՆ
gassiaarmenian@gmail.com

Բարսեղյան Սյուզաննա Սոսի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող
syuzanna.barseghyan@gmail.com

Գալստյան Միհրան Վարդգեսի
պատմական գիտությունների դոկտոր
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի վարիչ /
ԵՊՀ Մշակութաբանության ամբիոնի դոցենտ
akoonk@yahoo.com

Զախարկևիչ Ստեփան Արթուրի
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Եվրոպական հումանիտար համալսարան, Վիլնյուս, Լիտվա
stepan.zakharkevich@ehu.lt

Խաչատուրյան Նելլի Ռաֆիկի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Սփյուռքի ուսումնասիրության բաժնի գիտաշխատող
nelli.khachaturyan02@gmail.com

Կարապետյան Ռուբեն Սուրենի
պատմական գիտությունների դոկտոր
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Սփյուռքի ուսումնասիրության բաժնի վարիչ
karapetyan.ruben.s@gmail.com

Հակոբյան Գայանե Լևոնի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող
gayik20@gmail.com

Հակոբյան Մարիամ Միշայի
ԵՊՀ Պատմության ֆակուլտետի ասպիրանտ
mariam-hakobyan-1010@mail.ru

Հարությունյան Մարիամ Բագրատի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ լաբորանտ
mariamharutyunian96@gmail.com

Ճէպէճեան Հրայր Վահէի
աստուածաբանության դոկտոր
Արաբական ծոցի Աստուածաշունչի ընկերության ընդհանուր քարտուղար, Քուվեյթ
hrayr.jebejian@gmail.com

Մարկոսյան Սալվինե Հակոբի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Սփյուռքի ուսումնասիրության բաժնի կրտսեր գիտաշխատող
salvi.markosyan@gmail.com

Մարտիրոսյան Գոռ Մովսեսի
սոցիալական գիտությունների թեկնածու
Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի
Աշխատաշուկայի ուսումնասիրման և մասնագիտական կարիերայի կենտրոնի տնօրեն
gormartiros@gmail.com

Ներսիսյան Սոնա Արայիկի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող
sona.nersisyan2006@gmail.com

Պողոսյան Սվետլանա Հայկի
պատմական գիտությունների թեկնածու
Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի փոխտնօրեն / ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Մշակութային մարդաբանության բաժնի ավագ գիտաշխատող
poghosyansvetlana26@aspu.am

Սվազլյան Վերժինե Գառնիկի
բանասիրական գիտությունների դոկտոր
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Բանագիտության բաժնի առաջատար գիտաշխատող,
ՀՀ Գիտության վաստակավոր գործիչ
vsvaz333@yahoo.com

Վարդանյան Հրաձին Վարդանի
պատմական գիտությունների թեկնածու
ԵՊՀ Պատմության ֆակուլտետի ասիստենտ
vardanyan.h@ysu.am

Տանաջյան Լուսինե Ասատուրի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող
lusine.tanajyan@gmail.com

Օհանջանյան Ռուբեն Սամվելի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող
r.ohanjanyan@mail.ru

CONTENTS

A. RESEARCH PAPERS

I. RA - DIASPORA, RA - ABROAD: MUTUAL CONNECTIONS AND INTERACTIONS

Ruben Karapetyan
On the Migration Ties between the Diaspora and the Republic of Armenia 8

Hratsin Vardanyan
Mariam Hakobyan
The Policy of Identity as a Component of State–Diaspora Cooperation
(the Case of RA–Diaspora Relations) 21

Hrair Jebejian
Relations between the Armenian Communities in the Near East
and the Republic of Armenia: Current Trends, Challenges and Opportunities 34

Gayane Hakobyan
Social-Cultural Life of New Migrants in the Diaspora:
the Viewpoint of Relatives in Armenia 48

Sona Nersisyan
Experience of Integration of Russian and Indian Immigrants in Armenia 59

II. ARMENIAN COMMUNITIES OF EASTERN EUROPE

Stepan Zakharkevich
Culture of Memory of Armenian Communities in Eastern Europe and the Influence
of Historical Policies and National Projects at the Present Stage 72

Svetlana Poghosyan
Sociocultural Features of the Armenian Community of Varna:
Situation, Trends and Developments 89

Gor Martirosyan
Types of Entrepreneurship of Armenian Immigrants in Poland,
Results of the Diversification and Change of Their Activity 103

Lusine Tanajyan
Suzanna Barseghyan
Armenians in Czech Republic: Peculiarities of Community Life 113

III. ARMENIAN COMMUNITY OF THE USA

Mihran Galstyan
The Term "Repatriation" in the Context of Modern Processes of Diaspora:
the Case Study of the Armenian Community of Los Angeles 126

Verjine Svazlian
The Level of Preserving Armenianness among the Armenian-Americans
according to the Inscribed Materials of the Oral Tradition 139

IV. THEORETICAL ISSUES

Nelli Khachaturian
Mariam Harutyunyan
Religious Transmission in the Family: Theoretical Approach 156

Ruben Ohanjanyan
Features of the Application of the Bogardus Social Distance Measurement Scale 167

B. VARIA

V. REPORTS

Karen Asatryan
Certificates of the Educational System of the Armenians of Constantinople
(Late 19th – Early 20th Centuries) 176

Salvine Markosyan
The Role of Weekly Newsletter "Hayastan" in the Cultural Life
of Armenians in Constantinople 183

VI. EXHIBITION

Gassia Armenian
Remain in Light: Visions of Homeland and Diaspora 188

VII. REVIEWS

Tork Dalalyan
Lusine Hayriyan
Anahit Khechoyan
Études arméniennes contemporaines, 2023, № 15 :
La presse de langue arméniennes en France et la création d'un espace transnational 200

Antranik Dakessian
Haigazian Armenological Review: Four Books of the 43th and 44th Volumes 204

VIII. EVENTS

Suzan Pirnalyan
The 40th Year of Summer Intensive Course of Armenian Language and Culture:
an Armenian World in Venice 218

PHOTOS 221

INFORMATION ABOUT AUTHORS 230

СОДЕРЖАНИЕ

А. ИССЛЕДОВАТЕЛЬСКИЕ СТАТЬИ

I. РА–ДИАСПОРА, РА–ЗАГРАНИЦА: ВЗАИМНЫЕ СВЯЗИ И ВЗАИМОДЕЙСТВИЯ

Рубен Карапетян
О миграционных связях Диаспоры с Республикой Армения 8

Грацин Варданян
Мариам Акопян
Политика идентичности как составляющая
сотрудничества государства с диаспорой 21

Грайр Джебеджян
Отношения между армянскими общинами Ближнего Востока
и Республикой Армения: современные тенденции, вызовы и возможности 34

Гаяне Акопян
Социально-культурная жизнь новых мигрантов в Диаспоре:
точка зрения родственников в Армении 48

Сона Нерсисян
Опыт интеграции российских и индийских иммигрантов в Армении 59

II. АРМЯНСКИЕ ОБЩИНЫ ВОСТОЧНОЙ ЕВРОПЫ

Степан Захаркевич
Культура памяти армянских общин Восточной Европы и влияние на нее
исторической политики и национальных проектов в современном этапе 72

Светлана Погосян
Социально-культурные особенности армянской общины Варны:
ситуация, тенденции и развития 89

Гор Мартиросян
Виды экономической деятельности армянских иммигрантов в Польше,
результаты диверсификации и изменения этих видов деятельности 103

Лусине Танаджян
Сюзанна Барсегян
Армяне в Чешской Республике: особенности общинной жизни 113

III. АРМЯНСКАЯ ОБЩИНА США

Мигран Галстян
Термин «репатриация» в контексте современных процессов Диаспоры:
пример армянской общины Лос-Анджелеса 126

Вержине Свазлян
Уровень сохранения армянства у американских армян
по материалам устной культуры 139

IV. ТЕОРЕТИЧЕСКИЕ ВОПРОСЫ

Нелли Хачатурян
Мариам Арутюнян
Трансмиссия религиозности в семье: теоретические проблемы 156

Рубен Оганджанян
Особенности применения шкалы Богардуса, измеряющей социальную дистанцию 167

Б. VARIA

V. СООБЩЕНИЯ

Карен Асатрян
Аттестаты системы образования константинопольских армян
(конец 19-го – начало 20-го вв.) 176

Салвине Маркосян
Роль газеты «Айастан» в культурной жизни армян Константинополя 183

VI. ВЫСТАВКА

Кассия Арменян
Да пребудет с вами свет: видения родины и диаспоры 188

VII. РЕЦЕНЗИИ

Торк Далалян
Лусине Айриян
Анаит Хечоян
Études arméniennes contemporaines, 2023, № 15 : Армяноязычная пресса
во Франции и создание транснационального пространства 200

Андраник Дакесян
Haigazian Armenological Review: Четыре книги 43-го и 44-го томов 204

VIII. СОБЫТИЯ

Сюзан Пырналян
40 лет интенсивного летнего курса армянского языка и культуры:
армянский мир в Венеции 218

ФОТОГРАФИИ 221

СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ 230

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՒ
ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
7

անգլերենի խմբագիրներ՝ Լուսինե Տանաջյան
Անահիտ Խեչոյան

ռուսերենի խմբագիր՝ Նելլի Խաչատուրյան

տեխնիկական խմբագիրներ՝ Լուսինե Տանաջյան
Սյուզաննա Բարսեղյան
Սալվինե Մարկոսյան

ձևավորող և էջադրող՝ Արթուր Հարությունյան

Շապիկի վրա՝

Մուրադ-Ռաֆայելյան վարժարանի (Վենետիկ) պատկերով բացիկ՝
Քարոլ Մարք-Բուարե Գաֆտանճյանի ընտանեկան արխիվից (Ֆրանսիա)։

ՀԱԻԱ 7